## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՄԵԿՆԵՑ ԹԲԻԼԻՍԻ

Հայկական և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների միջև փոխադարձ կապը է՛լ ավելի ուժեղացնելու նպատակով, օրերս Թբիլիսի մեկնեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հատուկ դելեգացիան։

Դելեգացիայի կազմի մեջ են Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանը, Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Հովհաննիսյանը, թղթակից-անդամ Ա. Ղարիբյանը և Ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ս. Երեմյանը։

(ՀՀԻ)

## ԿԱՀՈՒՅՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԿՈՆԿՈՒՐՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ